4 (86). ԹԱՔԱՎՈՐԻ ՊԶՏԻ ՏՂԵՆ

Թաքավորին մեկը էրկու կնիկ է առե. իրեք մանչ առչի կընկնեն ունի, էրկու հատ է ետի կընկնեն։ Էդոնցեն ետի կընկնեն էղածեն պզտիկը իմաստուն կըլլի։ Էդոնց մեչ յըրընութուն օր կըլլի, պզտի մանչը իրենեն բան կըստեղծե. մեծ ախպրտիքը նախանձվին կը. էսոնք իրար հետ վիճաբանության կընկնին, կըսեն՝ «էսիկ մեզի պատիվ չի փերե»։ Իրար հետ կաղնի[1] զրուցեն կը, կըսեն. «էսոր ինչըղ էնենք, օր էս խելըռին մեզնեն ջոկենք»։ Միշըվըրը կէնեն, պզտկին է կը համոզեն· էսոնք հետները պաշար կառնեն, ուրուշ թաքավորի հող կէրթան։ Կէրթան մե թաքավորի հողըմ կելլեն։ Կելլեն օրա էտոնք ղոնաղներուն քովը ցածանց հորիմ ըռաստ քուքան։ Պըզտկին կըսեն.— Արի սիֆտը դու մեչը մըտի, էտև մենք կը մտնինք. էղոր կիչեցնեն հորին մեչը քիչըմ էսան-էնան, էդ կըսե.— էս ինչ բան է, իրենք չկան, էս հ'ո՞ւր քնացին։ Մնա կը, հորեն չի կրնա էլլե։

Մնա կը օրա, էդ թաքավորին հողը, վերին հորն օր ընկել է, թաքավորն օր կելլե բալքոնն օրա պտտելու, պարտեզը այեց օր էրկու հավք իրար էման կը զարնեն օր։

Թաքավորը կըսե.— Հայ վախ, հա՜յ, էդ ի՞նչ բան է, ինչի կը զարնեն։

Կէրթա նես թաքավորը, սիրտը ղաբուլ չի էնե, դուս քուքա կաշե օր էլի կը զարնեն իրար։ Էքսի օրը կելլե, էլի կաշե օր իրար կը զարնեն։ Թաքավորը տեսնի կը օրա կափսոսա, կանչե կը լըլընեբեն մեկին։ Կըսե.— Լըլը՛, կելլեք թըլըլ կը ճվաք, կսեք օր թաքավորը ժողով ունի, էսինչ օրը բիրըդին ժողովին դրտնըվին։

---

1 Գաղտնի (Ծ. Բ.)։

Էսիկ կելլե թելլելը ճվա պրծնի կը օրա, ժողովուրթը թոփ կելլի։

Թաքավորը կելլե կըսե,— Գիտե՞ք ինչի եմ կանչե. այդի հավքերը իրեք օր է իրար կը զարնեն՝ էդոր պատճառը վեվ օր ըսավ՝ իրեն վարձքը կուտամ, ձեր աշխատանքը վրաս չեմ թողնե։

Էդոնք բիրըդին կըսեն թե. «Մենք էդոնց լիզուն չենք հասկնա»։ Ժողովուրթն օր թոփ կելլի, հետները կուտիկըմ[1] կա. ժողովուրթը էդ կուտիկին առաչը հաց կը թապլեն, կուտիկը չի ուտե, տանի կը էդ հացին հորեն նես կը ցկե։ Ժողովուրթը կմտածե թե էս ի՞նչ բան է։ էդոնց միչեն էրկու-իրեք հոգի կէրթան կաշեն օր՝ հորին մեչ մե տղամ կա. հրպը՛։

Տղան կըսե.— Ինձի հանեցեք։

Հորեն հանեն կը, փերեն կը իրենց կուշտը, ժողովուրթին մեչը կը կայնեսնեն։ Հիմի էդ թաքավորին հարցին համար էդ տղան ձեռքը կը բանցրցնե կըսե.— Թաքավորը ապրած կէնա, ես օր ըսեմ՝ վճիռը կտրե՞ս կը։

Թաքավորը կըսե·— Եթե ինձի հասավ՝ կէնեմ։

Թաքավորին կըսե.— Քու հողըդ իրեք տարի սովութուն ընկել է։— էդոր վրա թաքավորը կը զարմանա։

Էդ տղան կըսե թե.— Սովութան վախտը հավքերը ձաք ունեին նոր հանեցին. հանեցին օրա մարը ձաքերուն վրանին էր։ Մարն օր էկավ քնաց լի էրկիր, սով էր, մնաց հարը մեննըկ ձաքերուն վրա վերոնք օր նոր էին հանած։ Ձաքերուն հարը կըսե՝ «Էս ի՞նչ բան է, մարը քնաց չէկավ»։ Չէկավ օրա ձաքերուն հարը էտրնք օր դարձավ, թեբուլներով, խչիլքով ծածկե կը ձաքերուն վրան, կըսե. «Էրթամ փորս քիչըմ աճուխ չոճուխ էնեմ»։ Կէրթա քուքա կաշե օր ձաքերը սաղլամ են, վրանին կը պառկի։ Էքսի օրն է կէրթա տոր իրեք տարին թըմմի կը։ Էդ մարթը մեծ նեղութունով էդ ձաքերը խոշըրցրնե կը, իրեք տարին օր կը լըրանա մարը կիմանա, օր էդ թաքավորին հողին մեչը լիութուն է, քուքա տեսնի կը օր ձաքերը խոշրցել են։

Տղան կըսե թե.— Թաքավոր, էդ հավքերը էդոր համար կը կովին։ Մարը կըսե թե՝ «Ի՞մ», հարն ա, կըսե թե՝ «Ի՞մն են»։ Տղան թաքավորին կըսե.— Հիմի էդ ձաքերուն օր մեծցցուց հարը, էդ ձաքերը հիմի ո՞ւմ կը պատկանին, թաքավոր։

Թաքավորը կըսե.— Էդ ինչ կըսես։

— Քու հարցերդ ես պարզեցի, հիմիա դու իմ հարցս պարզե։

---

1 Քոթոխ, շան լակոտ (Ծ. Բ.)։

Թաքավորը կըսե՝— Ձաքերը հորն են։— Թաքավորը կըսե.— Ես քեզի ձեռքես բաց չեմ թողնե, քեզի կէնեմ լըլընուս ընկեր։

Տղան կըսե.— Եփօր դու ինձի լըլը էրար, ես խելքիս կոածը կըսեմ։ Դու թաքավոր ես, ամենաուժեղը թաքավորներն են։ Դու մեծ պայեստներ շինե, հացերը լից։ Կարող է ուրուշ կառավարութան մեջ սովութուն ըլլի, դու քու ժողովուրթիդ պահե։ Կիմանա՞ս,— կըսե թաքավորին։

Թաքավորն է կըսե.— Ինչի չեմ լսե։

Թաքավորը մեծ գումար կը գումարցընե, լըլե կը հացով, շքրով պայեստները։ Էս տղին հորը էրկիրը սովութուն կըլնի. ժողովուրթը քուքան էդ տղին թաքավորին հողեն հաց կտանին։ Իրեն հարն ու ախպըրտանքը կըսեն՝ «Ինչ էնենք, մենք ի՞նչըղ ապռինք»։ Ձորս ախպարը ձիանը կըպատրաստեն, խուրշիններով քուքան օր էդտից հաց տանին։ Էդոնք օր քուքան՝ էսիկ ախպըրտանցը ճանճե կը, էսիկ կանչե կը ախպըրտանցը։

Թաքավորը ժամանակին էդ տղին ըսել էր օր՝ «Ես օր կը մահանամ՝ էս տղան տի ըլլի թաքավորը»։ Էդ իմաստուն տղան օր կըլլի թաքավոր, էդ վախտը ախպրտիքը ձիաներով քուքան։ Էսիկ ախպըրտանցը չի այտնե, թե ինքը էդոնց ախպարն է։

— Ըլլի ժամանակ օր հարն ու մարը տղին ձեռվնուն չուր լլեն,— կըսե թաքավոր դառցած տղան։— Էդ խոսքին համար էին էս թաքավոր տղին կորուցե։

Հիմի ախպրտանքն օր էկան հացի, կանչե կուտեսնե, խմեսնե կը, խուրշինները կը լլե օր ճամփե պիտի, գաղտնի իրեն մե թասըմ չուրխմիչմ ինքը թաքավորը ախպրտոցեն գաղտնի թնե կը խուրշինին մեչ, ախպրտոցենե փարա չի առնե, կըսե.— Մեմե օր քուքաք, հարերդ ու մարերդ հետվիդ փերեք,— կըսե ախպրտանցը։

Նորեն քուքան օրա, հացերն օր կը պարպի՝ մեմե քուքան, հարն ու մարն է հետվին կը փերեն։ Կինը ինչխ օր պետքն է շահե պատվե կը։

Հարն ու մարը կըսեն.— «Մենք է գոնե շնորքըմ ունենանք ձեռվընուն չուր լըլենք ու փեշկիրը տանք»։

Թաքավորն օր կելլե լվասվելու՝ հորը ձեռքը կը բռնե, մարն օր չուր կը լլե, ձեռքը կը բռնե, կըսե.— Ես ժամանակին ըսի օր կըլլի միշոց օր հարն ու մարը տղին ձեռվընուն չուր լլեն։ Ես ձեր տղան եմ, էդիկ չէղավ օր դուք իմ ձեռվընուս չուր լլեք։

Ձի թողնե օրա, ինչխ օր պետք է պատիվ կուտա, կըսե.— Ես հիմի թաքավոր եմ. ես ձեզի ու էս ժողովուրթին կրնամ կշտասնե,— կըսե.— Դուք գիտեք, օր ախպրտիքս ինձի նախանձվան ու կորուցին, ես ազատվա, էտև թաքավոր դառցա, մեղք բան իմ մեջս չկա։